

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի արդյունքների ամփոփում:
2. 2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների արդյունքների ամփոփում:
3. Մասնագիտությունների ուսումնական պլանների հաստատման հարցը:
4. ՀՈՒՖ անապահով ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության ներկայացման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

**Լսեցին-** 2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի աշխատանքների կազմակերպման հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ լուծարային շրջանի ժամանակացույցը նախապես փակցվել է հայտարարությունների ցուցափեղկում և տեղադրվել է Գավառի պետական համալսարանի համացանցային կայքում, քննությունները կազմակերպվել է ըստ ժամանակացույցի:

**Որոշեցին** –Այն ուսանողների համար, ովքեր չեն կարողացել քննությունները հանձնել կազմակերպել լուծարային երկրորդ քննաշրջան՝ հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 15-ը ներառյալ:

**Լսեցին-**2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների արդյունքների մասին հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ լուծարային շրջանի ժամանակացույցը նախապես տեղադրվել է Գավառի պետական համալսարանի համացանցային կայքում, ստուգարքները և քննությունները կազմակերպել են ըստ այդ ժամանակացույցի:

**Որոշեցին** –Այն ուսանողների համար, ովքեր չեն կարողացել ստուգարքները և քննությունները հանձնել, առաջին լուծարային շրջան կազմակերպել հոկտեմբերի 8-ից հոկտեմբերի 26-ը ներառյալ, երկրորդ լուծարային շրջան՝ հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 9-ը՝ ներառյալ:

**Լսեցին-** Ուսումնական պլանների հաստատման հարցը / զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/  
Քննարկվեցին բարելավված ուսումնական պլանները:

**Որոշեցին** – Մասնագիտությունների բարելավված ուսումնական պլանները, որոնք քննարկվել են ամբիոններում՝ դասախոսների և արտաքին փորձագետների հետ համատեղ, ներկայացնել հաստատման:

**Լսեցին**- ՀՈՒՖ անապահով ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության ներկայացման հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/:

**Որոշեցին** – Ուսման վարձի գեղջի կիրառման համար ԳՊՀ ռեկտորատին ներկայացնել 20 ուսանողի փաստաթղթեր:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան

